ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Իտալիայի Հանրապետություն (Թուրին) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**
   - Տաթևիկ Միքայելյան, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կենսաթոշակային ապահովության և այլ դրամական վճարների վարչության կենսաթոշակային ապահովության և այլ դրամական վճարների բաժնի պետ,
   - Գայանե Բարսեղյան, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության ինտեգրված սոցիալական ծառայությունների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,
   - Արփինե Սարգսյան, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ,
   - Նաիրա Խաչատրյան, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող խորհրդական:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Իտալիայի Հանրապետություն (Թուրին), 2026 թվականի հունիսի 7-13-ը:

3. **Հրավիրող կողմը.**

Միջոցառումը կազմակերպել են Աշխատանքի միջազգային կազմակերպությունը և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը՝ Սոցիալական պաշտպանության ոլորտի թվային փոխակերպմանը նվիրված դասընթացին մասնակցելու նպատակով:

4. **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն «Սոցիալական պաշտպանության ոլորտի թվային փոխակերպում» դասընթացին՝ նպատակ ունենալով խորացնել գիտելիքները հետևյալ բնագավառներում՝

- թվային փոխակերպման հիմնական սկզբունքներ
- թվային փոխակերպման իրավական և կարգավորող շրջանակ
- ծառայությունների նախագծում և նորարարական լուծումներ
- գործառնական համակարգեր և տեղեկատվական ռեեստրներ:

5. **Քննարկված թեմաները.**

Դասընթացի ընթացքում քննարկվել են հետևյալ հիմնական թեմաները՝

- թվային փոխակերպում
- փոխգործունակություն
- իրավական շրջանակներ
- մարդու իրավունքներ և հաշվետվողականություն
- տվյալների պաշտպանություն և գաղտնիություն
- կիբեռանվտանգություն
- մարդակենտրոն լուծումների մշակում
- ծառայությունների նախագծում
- կառավարում և նորարարություններ
- գործառնական համակարգեր:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Դասընթացի շրջանակներում տեղի են ունեցել հանդիպումներ և մասնագիտական քննարկումներ դասընթացի կազմակերպիչների, միջազգային խորհրդատուների և մասնակից երկրների պետական կառույցների ներկայացուցիչների հետ:

Քննարկված հիմնական հարցերը վերաբերում էին՝

- սոցիալական պաշտպանության ոլորտի թվային փոխակերպման գործընթացների պլանավորման և իրականացման հիմնական մոտեցումներին,
- պետական տեղեկատվական համակարգերի միջև տվյալների փոխանակման մեխանիզմներին,
- թվային կառավարման ոլորտը կարգավորող օրենսդրական հիմքերին, թվային ծառայությունների մատուցման իրավական պահանջներին,
- անձնական տվյալների մշակման սկզբունքներին, տվյալների պաշտպանության միջազգային չափանիշներին, տեղեկատվության անվտանգ պահպանման և օգտագործման մեխանիզմներին,
- կիբեռսպառնալիքների կառավարման մեխանիզմներին,
- պետական կառավարման ոլորտում նորարարական լուծումների ներդրման հնարավորություններին:

7. Դասընթացի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի արդյունքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Մշակել և ոլորտային քաղաքականություններում ներառել սոցիալական պաշտպանության ոլորտի թվային փոխակերպման սկզբունքները՝ դրանք դիտարկելով որպես ոլորտի զարգացման առաջնահերթություններ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Տաթևիկ Միքայելյան		17.06.2026
Գայանե Բարսեղյան		17.06.2026
Արփինե Սարգսյան		17.06.2026
Նաիրա Խաչատրյան		17.06.2026